

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն
Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն
Տ Ե Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՄԱՍ 2-ԴԴ)

PUBLIC
ADMINISTRATION
THEORY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

(մաս 2-րդ)

*դասընթացի ծրագիր և
ուսումնամեթոդական ուղեցույց*

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2018

ՀՏԴ 352/354(072)

ԳՄԴ 67.401

Ք 141

*Հրատարակվել է ԵՊՀ միջազգային
հարաբերությունների
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ Վ. Ազյան

Գրախոս՝ ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյան

փ.գ.թ., դոցենտ Լ. Վարդանյան

Քալանթարյան Է. Ա., Ալթունյան Կ. Վ.

Ք 141 Հանրային կառավարման տեսություն (մաս 2-րդ):
Դասընթացի ծրագիր և ուսումնամեթոդական ուղե-
ցույց /Է. Քալանթարյան, Կ. Ալթունյան/. -Եր.: ԵՊՀ
հրատ., 2018, 78 էջ:

«Հանրային կառավարման տեսություն» (մաս 2-րդ) բակալավրի
ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի և
հանրային կառավարման ամբիոնի կողմից ներկայացված կրթական
ծրագրերի պահանջներին համապատասխան: Ծրագիրը նախատեսված է
«Հանրային կառավարում» բաժնի ուսանողների, ինչպես նաև կարող է
օգտակար լինել հանրային կառավարման տեսության և պատմության
հիմնախնդիրներով զբաղվող մարդկանց:

ՀՏԴ 352/354(072)

ԳՄԴ 67.401

ISBN 978-5-8084-2284-1

© ԵՊՀ հրատ., 2018

© Քալանթարյան Է., 2018

© Ալթունյան Կ., 2018

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS
CHAIR OF PUBLIC ADMINISTRATION

EDGAR KALANTARYAN
KATERINA ALTUNYAN

"THEORY OF PUBLIC ADMINISTRATION"

(part 2)

Course Syllabus & Methodology Guide

Yerevan
YSU PRESS
2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ
КАФЕДРА ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

ЭДГАР КАЛАНТАРЯН
КАТЕРИНА АЛТУНЯН

«ТЕОРИЯ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ»

(часть 2)

*программа курса и
методическое пособие*

Ереван
Издательство ЕГУ
2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի համառոտ նկարագրությունը.....	7
COURSE OVERVIEW AND DESCRIPTION	9
Բաժին 1. Կազմակերպչական-մեթոդական խնդիրներ	11
1.1. Դասընթացի նպատակը.....	11
PURPOSE OF THE COURSE.....	14
1.2. Դասընթացի կրթական արդյունքները.....	16
1.3. Գիտելիքների ստուգման ընթացիկ ձևերը	17
Բաժին 2. Դասընթացի թեմաները և համառոտ բովանդակությունը	18
2.1. Դասընթացի կազմակերպչական մեթոդական տվյալները.....	18
2.2. Դասընթացի թեմատիկ կառուցվածքը	18
2.3. Դասընթացի բովանդակությունը	20
<i>ԹԵՄԱ 1. Հանրային կառավարման ժամանակակից տեսությունը ("New Public Management").....</i>	<i>20</i>
<i>ԹԵՄԱ 2. Հանրային կառավարման բարեփոխումների հայեցակարգը.....</i>	<i>23</i>
<i>ԹԵՄԱ 3. Հանրային և մասնավոր հատվածների կառավարման հայեցակարգերը.....</i>	<i>26</i>
<i>ԹԵՄԱ 4. Քաղաքականություն-կառավարում երկատու (դիֆտոմիան) հանրային կառավարման ժամանակակից տեսությունում.....</i>	<i>30</i>
<i>ԹԵՄԱ 5. Բյուրոկրատիայի բազմազանությունը, մոդելները</i>	<i>33</i>
<i>ԹԵՄԱ 6. Առաջնորդություն, կազմակերպում և բյուրոկրատական համակարգի տրամաբանությունը.....</i>	<i>36</i>
<i>ԹԵՄԱ 7. Բյուրոկրատական քաղաքականության տեսությունը.....</i>	<i>40</i>

<i>ԹԵՄԱ 8. Վարչական իշխանության հայեցակարգը</i>	43
<i>ԹԵՄԱ 9. Կառավարման հիմնախնդիրները. Որոշումներ և նեսուրսներ</i>	46
<i>ԹԵՄԱ 10. Կառավարչական որոշումների տեսությունը</i>	49
<i>ԹԵՄԱ 11. Անճշտությունների վերահսկողության և «հանգամանքների տեսությունը»</i>	53
<i>ԹԵՄԱ 12. Կառավարման արդյունավետության տեսությունը</i>	56
<i>ԹԵՄԱ 13. Կադրային կառավարման հայեցակարգը</i>	59
<i>ԹԵՄԱ 14. Տնտեսության կառավարման հայեցակարգը</i>	62
<i>ԹԵՄԱ 15. Հանրային ընտրության տեսությունը</i>	65
<i>ԹԵՄԱ 16. Տեղեկատվական-հաղորդակցային կառավարում</i>	68
<i>ԹԵՄԱ 17. ՀՀ հանրային կառավարման արդիականացումը</i>	72
<i>Մասնագիտական բառարաններ</i>	77

Դասընթացի համառոտ նկարագրությունը

«Հանրային կառավարման տեսություն» (մաս 2) դասընթացի առանցքային մասն են կազմում հանրային կառավարման տեսական նոր ուղղություններն ու հայեցակարգերը, որոնք դասականից տարբերվում են կառավարչական ու կազմակերպչական աշխատանքի սկզբունքներով և մեթոդներով:

Դասընթացում ներկայացվում են հանրային կառավարման ժամանակակից ("New Public Management") հայեցակարգային, կառավարչական և տեխնոլոգիական փոփոխությունները, ներառյալ հանրային ու մասնավոր ոլորտների բոլոր այն կազմակերպությունների ուսումնասիրությունը, որոնք առաջնորդվում են կառավարման նոր հայեցակարգով:

Դասախոսական նյութը ներառում է հանրային կառավարման նոր հարացույցների (պարադիգմաների), ծրագրման ու կազմակերպման գործառույթների, արդյունավետ կառավարման, կադրերի հավաքագրման և հաղորդակցման, որոշումների կայացման գործընթացների ամբողջությունը: Հանրային կառավարման նոր հայեցակարգում ներկայացվում են կառավարչական մտքի հայեցակարգային փոփոխություններն ու կառավարման գիտության զարգացման նոր միտումները: Դասընթացի յուրաքանչյուր առանձին բաժին կոչված է ձևավորելու և զարգացնելու հանրային կառավարման համար անհրաժեշտ տեսական գիտելիքներ կառավարման տարբեր մակարդակների մասին, ինչպես նաև կարողություններ՝ կառավարման տարբեր ոլորտներում համապարփակ գիտելիքներն ու ունակությունները կիրառելու համար:

Հանրային կառավարման տեսության արդի փուլի զարգացմանը նպաստել են երեք հիմնարար գործոններ՝ հայեցակարգային, մարդկային և տեխնոլոգիական: Հայեցակարգային գործոնը կարևորում է կառավարման տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու, առաջնայինը երկրորդայինից տարանջատելու, կան-

խատեսելու ու ծրագրելու կարողությունները: Մարդկայինը ներառում է բոլոր այն ռեսուրսները (մարդկային, հոգևոր և այլն), որոնք կարող են երաշխավորել կառավարման առավել արդյունավետ ընթացակարգեր: Նշված գործոնի ազդեցությունն էլ ավելի է կարևորվում արդի գլոբալիզացիայի պայմաններում, երբ գործ ունենք կառավարման տարաբնույթ սուբյեկտների և ինստիտուտների հետ: Ինչ վերաբերում է տեխնոլոգիական գործոններին, ապա դրանց կիրառելիությունը հանրային կառավարման ժամանակակից հայեցակարգում ուղղակի անհրաժեշտություն է: Տեղեկատվական համակարգերի կատարելագործումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը հանրային կառավարման համակարգ հնարավորություն է տալիս ստեղծելու նյութատեխնիկական անհրաժեշտ բազա՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Դրանց օրըստօրե աճող դերն ու նշանակությունը նպաստում են հանրային կառավարման համակարգի հետագա զարգացմանը և արդիականացմանը:

Հանրային կառավարման համակարգի կայացման նպատակով կարևոր են տեսության շրջանակներում հանրային կառավարման ժամանակակից հայեցակարգի տրամաբանության համակողմանի ուսումնասիրությունն ու անհրաժեշտ հմտությունների փոխանցումը գալիք սերունդներին:

«Հանրային կառավարման տեսություն» (մաս 2-րդ) ուսումնական դասընթացի ծրագիրը նախատեսված է հանրային կառավարման և հարակից մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերի ուսանողների համար: Ծրագրի ներածական մասում ներկայացվում են դասընթացի հիմնական նպատակները, ակնկալվող արդյունքները, դասաժամերը, ուսանողների գիտելիքների ու կարողությունների ստուգման ձևերն ու գնահատման չափանիշները, ինչպես նաև դասախոսության թեմաների նկարագրությունը, սեմինար պարապմունքների թեմաներն ու գրականության ցանկը:

COURSE OVERVIEW AND DESCRIPTION

This course involves new theoretical concepts and approaches to public administration. The new concept of public administration owes much to traditional public administration but differs in that the former focuses on new managerial and organizational standards and indicators. The course introduces conceptual, managerial and technological changes of public administration, including the study of strategic concepts and techniques in the public and private sectors suitable for and based on a new governance concept. All the materials cover and review the new paradigms in public administration, planning and organizing functions, efficient management, personnel recruitment and communication, decision-making processes, etc. In response to the ever-changing needs of humankind, the course examines public administration theory and related concepts, how the centuries-old discipline developed from its introduction, interpretation and application. The new concepts of public administration introduces changes in managerial thinking, logic, and new trends in administrative science. Each of the chapters is designed to develop the knowledge and skills necessary for effective governance in different parts of government.

The three main factors contributing to the theoretical development of the current stage of the Public Administration are: conceptual, human and technological. The conceptual factor attaches importance to the process perspectives and orientation, predicting and planning. The humanity factor emphasizes the necessity of all resources (human, material, spiritual, etc.) which would guarantee more effective management procedures. The importance of this factor is more explicit within the framework of modern global processes and in terms of various actors and institutions of governance. As for technological factors, their applicability is just a necessity in the "New Public Management" system. The accomplishment of information systems and introduction of new

technologies into a public administration system enable the creation of the logistics bases for using information technology capabilities. Their ever-increasing role and credibility contributes to the further development and upgrading of the public outreach system.

The comprehensive studies on “New Public Management” concept should continue to develop the public administration system in the future and to transfer to later generations.

“The Public Administration Theory” (Part 2) syllabus is designed for students at bachelor's degree program in public administration and related disciplines. The course includes an introduction that, in turn, provides an overview and objectives, the desired course outcomes, the timetables, the criteria for grading, the number of credits, as well as the topics, the quizzes, and the bibliography.

Բաժին 1. Կազմակերպչական-մեթոդական խնդիրներ

1.1. Դասընթացի նպատակը

Արդի կառավարման մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է ժամանակյին համահունչ վերաձևակերպել հանրային կառավարման ձևերը, խնդիրները, գործունեությունը՝ տալով դրանց համապատասխան լուծումներ: Աշխարհի զարգացած երկրներում սկսվել է նոր՝ «լավ կառավարման» համակարգի ստեղծման գործընթացը՝ զարգացած տնտեսական ենթակառուցվածքներ ստեղծելու, ինչպես նաև հանրային ծառայությունների որակն ու արդյունավետությունը բարելավելու ուղղություններով: Այս իմաստով չափազանց կարևոր է վերոնշյալ գործընթացի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Օրագրում լուսաբանվում են արդիական տեսական հարացույցներ, որոնց շարքում են նաև հանրային կառավարման ժամանակակից հայեցակարգերը: Մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել հանրային կառավարման ընթացակարգերի տեսամեթոդական հիմնադրույթները, գործառույթները, խնդիրները և այլն:

Դասընթացը ներառում է հանրային կառավարման տեսության և կառավարման հարացույցի փոփոխությունների թեմաները, որոնք ուսանողներին կներկայացնում են ժամանակակից հանրային կառավարման ծագման նախադրյալները, քաղաքական և տնտեսական անհրաժեշտությունը, գերակա ուղղությունները, ինչպես նաև հարացույցի զարգացման արդի միտումները: Դասընթացը հնարավորություն է տալիս հասկանալու հանրային ու մասնավոր (բիզնես) կազմակերպությունների կառավարչական և կազմակերպչական առանձնահատկությունները, մոդելները, իշխանական հարաբերությունները, որոշումների կայացման գործընթացն ու հիմնական դերակատարներին: Ի տարբերություն դասական հանրային կառավարման տեսության, որտեղ քննարկվում են կառավարման մասնագիտացման, աշխատանքի կազմակերպման ձևերը

և այլն, արդի հանրային կառավարման ուսումնասիրության առանցքում են կազմակերպությունների կառավարման սոցիալական գործոնները, ինչպես նաև գլոբալացվող աշխարհում ի հայտ եկող տեսական և հայեցակարգային նոր մոտեցումները:

Դասընթացի նպատակն է՝

- ուսումնասիրել հանրային կառավարման ժամանակակից տեսության ծագումը և կառավարման հարացույցի փոփոխությունները, զարգացման արդի միտումները,

- ներկայացնել հանրային կառավարման տեսական և գործնական նոր խնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև իշխանական հարաբերությունների ձևաչափերն ու մոդելները,

- խորությամբ ուսումնասիրել հանրային կառավարման ժամանակակից տեսության առանցքում գտնվող կառավարման վերահսկողության, հաշվետվողականության և քաղաքականության իրականացման խնդիրները,

- ուղենշել հանրային և մասնավոր ոլորտների կառավարման ու կազմակերպությունների տեսության առանձնահատկությունները:

Աշխատանքի շրջանակներում մանրամասն քննարկվել են նաև տարբեր տեսաբանների և վերլուծաբանների մոտեցումները, որոնք ներառում են հանրային կառավարման ժամանակակից տեսության գրեթե բոլոր ուղղություններն ու հայեցակարգերը՝ «Հանրային կառավարման ժամանակակից տեսություն», «Բյուրոկրատական քաղաքականություն», «Հանրային ընտրություն», «Կառավարչական որոշումների կայացում», «Հանրային և մասնավոր հատվածների կառավարում», «Կադրային կառավարում» և այլն: Վերոնշյալ թեմաների խորացված դասավանդումը նպատակ ունի համակողմանի գիտելիքներ փոխանցելու հանրային, պետական, մասնավոր և տեղական ինքնակառավարման մարմինների տեսա-

կան և գործնական խնդիրներով զբաղվող լայն շրջանակի մարդկանց համար:

Օրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է յուրացնի ծրագրի բոլոր կրթական վերջնարդյունքները.

1. Մասնագիտական գիտելիք և իմացություն

– կտիրապետի ընդհանուր մասնագիտական, հանրային կառավարման տեսությունների հասկացության թառապաշարին և մեթոդական ընթացակարգերին,

– ունակ կլինի ներկայացնելու, բացատրելու ժամանակակից հանրային կառավարման տեսական հայեցակարգերը, խնդիրները,

2. Գործնական մասնագիտական կարողություններ

– կկարողանա ծրագրել և մասնագիտական ընդհանուր ու հատուկ մեթոդների կիրառմամբ իրականացնել ինքնուրույն աշխատանքներ,

– կքննարկի և կգնահատի հանրային կառավարման համակարգի ընդհանուր զարգացումները և դրանց միտումները,

3. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

– կկարողանա մասնագիտական միջավայրում հաղորդակցվել և մասնակցել մասնագիտական քննարկումների,

– ամբողջությամբ կըմբռնի և կփոխանցի հանրային կառավարման ժամանակակից տեսության հենքը կազմող գիտելիքներն ու հմտությունները:

PURPOSE OF THE COURSE

In order to meet the the modern challenges of new era of governance it is necessary to redefine and modernize the objectives of public administration. The concept of "good governance" that has been introduced into the governance system of developed countries aims to create new economic infrastructures and effective public services. In this sense, the necessity to study the aforementioned process becomes important.

The course covers both theoretical and practical issues on the discipline of Public Administration. The analysis is based on thorough examination of the methodological principles, functions, objectives of “New public management” and other concepts.

Changes of basic assumptions of theory and practice, the political and economic conditions, theoretical priorities and current trends are the prior issues with the course framework. It provides an opportunity to clarify the administrative and governance specifics of public and private (business) organization models, power relations, decision-making process and key actors, etc.

Unlike the classical “Public dministration theory, which focuses on management specialization, forms of work organization, etc., the academic framework of "New public management" includes oversight, accountability, and policy implementation issues.

The purpose of the course is to:

- explore the origins of "New public management", paradigm shift and current development trends,
- study the mechanisms of oversight, accountability, and policy implications of the "New public management" theory,
- analyze conceptual approaches to theoretical and practical issues of public administration as well as new forms and models of power relations,

- specify the main features of management and organization in public and private sectors.

The concepts and works of many theorists are discussed in detail, which covers the whole framework of public administration theory. The represented list of topics and issues provide comprehensive knowledge on public administration, state and local governance matters for a wide audience of people.

1.2. Դասընթացի կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը՝

- կյուրացնի հանրային կառավարման ժամանակակից տեսության կառուցակարգերի հիմնական ուղղություններն ու մոտեցումները,

- կտիրապետի հանրային կառավարման տեսական հիմնական հայեցակարգերին,

- կկարողանա գնահատել հանրային կառավարման ժամանակակից մոդելների կիրառման հնարավորությունները կազմակերպությունների արդյունավետ կառավարման համատեքստում,

- համակողմանիորեն կվերլուծի հանրային կառավարման արդի խնդիրները ՀՀ-ում՝ առաջարկելով նոր մոտեցումներ «լավ կառավարման» ապահովման համար:

Ունակ կլինի՝

- պարզաբանելու հանրային կառավարման ժամանակակից սկզբունքներն ու կառավարման արդյունավետությունը, մասնագիտական հասկացությունները,

- վերլուծելու հանրային կառավարման ժամանակակից տեսության հարցադրումները՝ ելնելով տարբեր երկրների փորձից, տարանջատելով հանրային կառավարման դասական և ժամանակակից՝ հետդասական տեսության խնդիրները,

- դասակարգելու հանրային կառավարման ոլորտի սուբյեկտները, նրանց գործառույթներն ու կառավարման արդյունավետությունը,

- գնահատելու հանրային կառավարման ժամանակակից հայեցակարգի փոփոխման քաղաքական և տնտեսական անհրաժեշտությունը,

- տեսության հիմնադրույթների դիրքերից համակողմանիորեն վերլուծելու հանրային կառավարման օրակարգային հարցադրումները,

- բացատրելու ՀՀ-ում և հետխորհրդային այլ երկրներում հանրային կառավարման համակարգի կայացման գործընթացի արդի փուլը՝ կատարելով տեսական և գործնական առաջարկություններ,

- թվարկելու կառավարման առաջնահերթությունները, քայլերի հաջորդականությունը, որով պետք է ծրագրվի և գնահատվի ժամանակակից հանրային կառավարման համակարգի արդյունավետությունը ՀՀ-ում:

1.3.Գիտելիքների ստուգման ընթացիկ ձևերը

Ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվում է երկու ընթացիկ և եզրափակիչ քննությունների միջոցով:

Առաջին ընթացիկ քննությունը գրավոր առաջադրանք է: Այն գնահատվում է առավելագույնը 5 միավոր, միավորների քայլը 0,5 է: Առաջին ընթացիկ քննությունը ներառում է 1-8-րդ թեմաները:

Երկրորդ ընթացիկ քննությունը գրավոր առաջադրանք է, որը նույնպես գնահատվում է առավելագույնը 5 միավոր, միավորների քայլը՝ 0,5: Երկրորդ ընթացիկ քննությունը ներառում է 8-17-րդ թեմաները:

Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Այն անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որոնցից առաջին երկու հարցերը գնահատվում են 3-ական միավոր, իսկ երրորդ հարցը՝ 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Բաժին 2. Դասընթացի թեմաները և համառոտ բովանդակությունը

2.1. Դասընթացի կազմակերպչական մեթոդական տվյալները

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակը
Դասախոսություն	46
Սեմինար պարապմունք	14

2.2. Դասընթացի թեմատիկ կառուցվածքը

№	<i>ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ</i>	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ	
		դասա- խոսու- թյուն	սեմինար պարապ- մունք
	<i>Ներածություն</i>	2	
1	<i>Հանրային կառավարման ժամանակակից տեսությունը ("New Public Management")</i>	4	
2	<i>Հանրային կառավարման բարեփոխումների հայեցակարգը</i>	4	2
3	<i>Հանրային և մասնավոր հատվածների կառավարման հայեցակարգերը</i>	2	
4	<i>Քաղաքականություն-կառավարում երկատու (դիփտոտմիան) հանրային կառավարման արդի տեսությունում</i>	4	

5	<i>Բյուրոկրատիայի բազմազանություն, մոդելները</i>	2	2
6	<i>Առաջնորդություն, կազմակերպում և բյուրոկրատական համակարգի տրամաբանությունը</i>	2	
7	<i>Բյուրոկրատական քաղաքականության տեսությունը</i>	2	
8	<i>Վարչական իշխանության հայեցակարգը</i>	2	2
9	<i>Կառավարման հիմնախնդիրները. Որոշումներ և ռեսուրսներ</i>	4	
10	<i>Կառավարչական որոշումների տեսությունը</i>	4	2
11	<i>Անճշտությունների վերահսկողության և «հանգամանքների» տեսությունը</i>	2	
12	<i>Կառավարման արդյունավետության տեսությունը</i>	2	
13	<i>Կադրային կառավարման հայեցակարգը</i>	2	2
14	<i>Տնտեսության կառավարման հայեցակարգը</i>	2	
15	<i>Հանրային ընտրության տեսությունը</i>	2	
16	<i>Տեղեկատվական-հաղորդակցային կառավարում</i>	2	
17	<i>ՀՀ հանրային կառավարման արդիականացումը</i>	2	4
	ԸՆԴԱՄԵՆԸ	46	14

2.3. Դասընթացի բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Հանրային կառավարման ժամանակակից տեսությունը ("New Public Management")

Դասական հանրային կառավարման խնդիրները: Հանրային կառավարման ժամանակակից տեսության (*"New Public Management"*) ծագումը: Կազմակերպման ձևերի զանազանություն և ծրագրում: Կառավարման տեսության դրաքերյան ուղղությունը: Ձեռնարկատիրական կազմակերպությունների չորս հիմնական մոդելները՝ գործառական (ֆունկցիոնալ) մոդել, բաժանմունքային մոդել, ծրագրային մոդել, մատրիցայի մոդել: Կազմակերպությունների կառավարման հինգ արքետիպերը (configuration). Հենրի Մինցբերգ: Հանրային կառավարման դասական և ժամանակակից հարացույցի (պարադիգմա) փոփոխությունը (Ռիչարդ Դաֆտ): *"New Public Management"*-ի գերակա խնդիրները և զարգացման հեռանկարները: *"New Public Management"*-ի սահմանումը (Ջորջ Հ. Ֆրեդերիքսոն): «Նոր մենեջերիալիզմի» հայեցակարգը: Ընդհանուր և գործառական կառավարում: *"New Public Management"*-ի գործառույթները: *"New Public Management"*-ի յոթ գործառույթներն ըստ Լյութեր Գուլիքի: *"New Public Management"*-ի սկզբունքները (Փիթեր Դրաքեր, Չեսթեր Բերնարդ): *"New Public Management"*-ի սկզբունքների արդյունավետությունն ըստ Թոմ Փիթերսի և Ռոբերտ Ուոլթերմենի: *"New Public Management"*-ի բիզնես մեխանիզմները: Կառավարում՝ ըստ խնդիրների և արդյունքների: Որակի կառավարում: Համապատասխանություն, արժեքներ և արդարություն: Հանրային կառավարման հետմոդեռնիստական տեսություն:

Գրականություն

1. **Քալանթարյան Է.**, *Հանրային կազմակերպությունների տեսություն*, ԵՊՀ հրատ., Եր., 2016, 200 էջ:
2. **Սուվարյան Յ.**, *Մենեջմենթ*, «Տստեսագետ», 2009, Եր., էջ 16-21:
3. **Друкер Ф. Питер**, *Энциклопедия менеджмента*, Изд. дом “Вильямс”, М., 2004, 432 с.
4. **Кузнецова Н. В.**, *История Менеджмента*, Владивосток, 2004, с. 11-14.
5. **Daft L. Richard**, *Management*, 9th ed., South-Western Learning, Vanderbilt, 2010.
6. **Frederickson H. G., Smith B. K., Larimer W. Ch., Licari J. M.**, *The Public Administration Theory Primer*, 2nd ed., "Westview Press", 2012, pp. 227-235.
7. **Kuotsai T. L.**, *Handbook of Public Management Practice and Reform*, New York, 2001, pp. 57-97, 431-447.
8. **Lane Jan-Erik**, *New Public Management*, "Routledge", London and New York, 2000, pp. 19-39.
9. **Laurence E., Lunn Jr.**, *Public Management: Old and New*, "Routledge", New York, 2006, pp. 104-132, 136-154, 157-180.
10. **Lynn B. Naomi, Wildavsky A.**, *Public Administration: The state of the discipline*, Chatham, New Jersey, 1990, pp. 73-84, 157-185, 185-203, 483-495.
11. **Mintzberg H.**, *The Structuring of Organizations*, "Prentice-Hall", USA, 2007, 512 p.
12. **Otenyo E. E., Lind N. S.**, *Comparative Public Administration: The Essential Readings*, Elsevier Ltd, 2006, pp. 543-603.
13. **Rumki B.**, *Public Administration: Concepts and Theories*, Fifth ed., New Delhi, 2004, pp. 15-23, 24-26.
14. **Giuseppe Bonazzi**, *Storia del pensiero organizzativo*, 14^a edizione, by Franco Angeli, Milano, Italy, 2008, p. 286-301, 301-309.

Լրացուցիչ գրականություն

1. Проблемы Современного Государственного Управления в России, Материалы постоянно действующего науч. семинара, вып. N 9(30), «Науч. эксп.», М., 2010, 112 с.

2. **Anthopoulos L. G., Reddick G. Ch.**, Government e-Strategic Planning and Management: Practices, Patterns and Roadmaps, Vol. 3, "Springer", London and New York, 2014, 367 p.

3. **Barzelay M.**, The New Public Management: Improving Research and Policy Dialogue, University of California Press Ltd, England, 2001, 240 p.

4. **Brown John S., Duguid Paul**, Knowledge and Organization: A Social-Practice Perspective, 2001, 432 p.

5. **Gulick, Luther Halsey**, *Administrative Reflections from World War II*. "University of Alabama Press", 1948.

6. **Kupryashin G. L.**, Modernization of the Public Administration: Institutions and Interests, Moscow University Press, 2012, 312 p.

7. **Mara C. M., Olson L. K.**, Handbook of Long-Term Care Administration and Policy, "CRC Press", USA, 2008, 466 p.

8. **McCormack, Sugimoto Y.**, The Japanese trajectory: Modernization and beyond, "Cambridge University Press", 2008, pp. 233-264.

9. **O'Leary R., Bingham L. B.**, The Collaborative Public Manager: New Ideas for the Twenty-first Century, Georgetown University Press, Washington DC, 2009, 335 p.

10. **Pollitt Ch., Bouckaert G.**, Public Management Reform: A Comparative Analysis-New Public Management, Governance, and the Neo-Weberian State, "Oxford University Press", 3rd ed., New York, 2011, 386 p.

11. **Peters, Thomas J., and Jr. Waterman, Robert H.**, In Search of Excellence: Lessons from America's Best-Run Companies. New York: "Harper & Row" Publishers, 2006, 400 p.

12. **Waldo D.**, The Administrative State: A Study of the Political Theory of American Public Administration, The Ronald Press, New York, 1984.

≈Մեմինար պարապմունքի հարցեր≈

Հանրային կառավարման ժամանակակից հարացույցի ծագման նախադրյալները:

Հանրային կառավարման դասական և ժամանակակից տեսությունների համեմատական վերլուծություն:

"New Public Management"-ի սկզբունքները, գործառույթները, խնդիրները:

"New Public Management"-ի տեսական հիմնադրույթները:

"New Public Management"-ի հետմոդեռնիստական տեսությունը:

ԹԵՄԱ 2. Հանրային կառավարման բարեփոխումների հայեցակարգը

Ի՞նչ է բարեփոխումը: Վարչական բարեփոխումների չափանիշները: Վարչական բարեփոխումներ իրականացնելու նպատակը, անհրաժեշտությունը: Վարչական բարեփոխումների իրականացման մեթոդաբանությունը և սահմանափակումները: Բարեփոխումներ անցկացնելու քաղաքականության գերակա խնդիրները: Վարչական բարեփոխումներ իրականացնելու տնտեսական բաղադրիչը: Վարչական բարեփոխումներ իրականացնելու մշակութային բաղադրիչը: Կառուցվածքային և գործառութային վերակառուցումներ: Բարեփոխումները համակարգող և վերահսկող մարմինները: Վարչական բարեփոխումների դասական մոդելը: «Բարեկեցիկ պետության» մոդելը: Վարչական բարեփոխումների տեսակները՝ ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ռեժիմային (վարչակար-

գի) բարեփոխումներ, համընդգրկուն բարեփոխումներ, աստիճանական բարեփոխումներ, կերպափոխում՝ առանց բարեփոխման: Տեղական կառավարման մակարդակում իրականացված վարչական բարեփոխումների էությունը: Վարչական ինքնավարություն: Քաղաքական ինքնավարություն: Բարեփոխումների ճգնաժամը: Վարչական բարեփոխումների արդյունքների գնահատումը:

Գրականություն

1. **Սուվարյան Յ.**, *Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում*, «Տնտեսագետ», 2014, 164 էջ:

2. **Гаман-Голутвина О., Олейника А.**, *Административные реформы в контексте властных отношений: Опыт постсоциалистических трансформаций в сравнительной перспективе*, РОССПЭН, М., 2008, 364 с.

3. **Boyne A. G., Farrell C. Law J., Powell M., Walker M. R.**, *Evaluating Public Management Reforms: Principles and Practice*, "Open Univ. Press", Philadelphia, 2003, pp. 14-26, 28-47.

4. **Bresser-Pereira L. C.**, *Democracy and Public Management Reform: Building the Republican State*, "Oxford University Press", New York, 2004, pp. 147-201, 213-229, 261-270.

5. **Galnoor I.**, *Public Management in Israel: Development, Structure, Functions and Reforms*, "Routledge", New York and London, 2011, 209 pp.

6. **Kuotsai T. L.**, *Handbook of Public Management Practice and Reform*, New York, 2001, pp. 159-183, 539-561.

7. **Laegreid P., Christensen T.**, *Transcending New Public Management: The Transformation of Public Sector Reforms*, Ashgate e-book, England, 2007, 301 p.

8. **Lynn Laurence E.**, *Public Management: Old and New*, New York, 2006, p. 104-132.

9. **McLaughlin K., Osborne P. Stephen, Ferlie E.**, *New Public Management: Current Trends and Future Prospects*, ed. Taylop and Francis e-lib., London and New York, 2003, pp. 7-30, 78-90.

10. **Otenyo E. E., Lind N. S.**, *Comparative Public Administration: The Essential Readings*, Elsevier Ltd, 2006, pp. 371-393, 433-463, 501-515.

11. **Schedler K., Proeller I.**, *Cultural Aspects of Public Management Reform, Research in Public Policy Analysis and Management*, Volume 16, 359 p.

Լրացուցիչ գրականություն

1. **Атаманчук Г. В.**, Обеспечение рациональности государственного управления, М., 1990.

2. **Гаман-Голутвина О. В.**, Административные реформы: Отечества и заруб. опыт, М., 2000.

3. **Оболонский А. В.**, Государственная служба, учеб. пособ., 2-е изд., изд. “Дело”, М., 2000.

4. **Carsten Greve, Per laegreid, Lise H. Rykkja**, *Nordic Administrative Refroms: Lessons for Public Management*, Palgrave, Norway, 2016, 248 p.

5. **Clasen J.**, *Reforming European Welfare States: Germany and the United Kingdom Compared*, Oxford University Press, New York, 2005, 264 p.

6. **Dunleavy P., Margetts H., Bastow S., Tinkler J.**, *New Public management Is Dead – Long Live Digital-Era Governance* // *Journal of Public Admin Research and Theory*, Vol. 16, № 4, 2005.

7. *Hungary: Reforming the State Territorial Administration*, OECD Public Governance Reviews, OECD, 2015, 104 p.

8. **Lewis C., Coghill K.** *Parliamentarians’ Professional Development: The Need for Reform*, “Springer”, London, 2016, 212 p.

9. **Ongaro E.**, Public Management Reform and Modernization: Trajectories of Administrative Change in Italy, France, Greece, Portugal and Spain, "Edward Elgar" publ., UK, 2009, 331 p.

10. Progress in Public Management in the Middle East and North Africa: Case Studies on Policy Reform, OECD, 2010, 312 p.

11. **Shaun F. Goldfinch, Joe L. Wallis**, International Handbook of Public Management Reform, "Edward Elgar Publishing", USA, 2009, 395 p.

12. **Tiihonen S.**, From Governing to Governance. Process of Change. "Tampere Univ. Press", 2004.

≈Մեմինար պարապմունքի հարցեր≈

Հանրային կառավարման ժամանակակից հարացույցի շրջանակներում իրականացված վարչական բարեփոխումները:

Բարեփոխումների քաղաքականության տնտեսական և քաղաքական բաղադրիչների վերլուծությունը:

Վարչական բարեփոխումների իրականացման վեսթմինսթերյան մոդելի կիրառման հեռանկարները: Առավելությունների և թերությունների պատճառները:

Վարչական բարեփոխումների տիպերը:

ԹԵՄԱ 3. Հանրային և մասնավոր հատվածների կառավարման հայեցակարգերը

Հանրային կառավարման բազմաստիճան համակարգը. Չարլզ Վ. Օսթրոմ: Հանրային և մասնավոր հատվածների տարանջատման սկզբունքները հանրային կառավարման ժամանակակից տեսության մեջ: Հանրային և մասնավոր հատվածների կառավարումը: Հանրային և մասնավոր հատվածների փոխգործակցության պատմական ձևերը. Թոմաս Բ. Մաքքրոու (Thomas K. McCraw): Հանրային և մասնավոր հատվածների կառավարման տարբերություններն

ու նմանությունները: Գործարարության սկզբունքների և մեթոդների կիրառման արդյունավետությունը հանրային հատվածում: Հանրային-մասնավոր փոխհարաբերությունների գործընկերային մոդել (ամերիկյան և եվրոպական առանձնահատկություններ): Համատեղ կառավարման մոդել: Հանրային կառավարման ժամանակակից համակարգի առանցքային դերակատարները: Պետություն-քաղաքացիական հասարակություն-մասնավոր հատված: Հանրային հատվածի կազմակերպություններ: Հանրային հատվածի ծառայությունները: Հանրային հատվածի կազմակերպությունների գործառույթները: «Հանրային շահ» և «բարիք» ("Public interest" and "Public good") հասկացությունների սահմանումը: Մասնավոր հատվածի կազմակերպությունները, դրանց գործառույթները: Մասնավոր հատվածի կազմակերպությունների ծառայությունների համակարգը: Ոչ կառավարական կամ «երրորդ հատվածի» կազմակերպությունների ազդեցությունը կառավարման վրա:

Գրականություն

1. **Ալեքսանյան Ա. Ս.**, *Հետխորհրդային արհեստակցական միությունները քաղաքացիավարական ժողովրդաիշխանության գործոն*, Գիտաժողովի նյութեր: Երևան, ԼՂՀ ԿԳ, Մ. Մաշտոց համալսարան, 2011, էջ 20-29:

2. **Ալեքսանյան Ա. Ս.**, *Կրոնական կազմակերպությունները հետխորհրդային քաղաքացիական հասարակության համակարգում*, XX դարի կրոնական մարտահրավերները և Հայաստանը: Գիտաժողովի նյութեր: Երևանի համալս. հրատ., Եր., 2011, էջ 106-114:

3. **Ալեքսանյան Ա. Ս.**, *Քաղաքացիական հասարակություն*, Երևանի համալս. հրատ., Եր., 2006, էջ 311-329:

4. **Agranoff R., McGuire M.**, *Collaborative Public Management: New Strategies for Local Governments*, Georgetown Univ. Press, Washington DC, 2003, pp. 1-67, 68-125, 175-197.

5. **Fenwick J., McMillan J.**, *Public Management in the Postmodern Era: Challenges and Prospects*, UK, 2010, pp. 3-64.
6. **Frederickson H. G., Smith B. K., Larimer W. Ch., Licari J. M.**, *The Public Administration Theory Primer*, 2nd ed., "Westview Press", 2012, pp. 97-101.
7. **Kuotsai T. L.**, *Handbook of Public Management Practice and Reform*, New York, 2001, pp. 389-405, 513-539.
8. **Lynn B. Naomi, Wildavsky A.**, *Public Administration: The state of the discipline*, Chatham, New Jersey, 1990, pp. 127-157.
9. **Miller T. H., Fox J. Ch.**, *Postmodern Public Administration*, by M.E. Sharpe, NY, 2007, 172 p.
10. **Morris C. J., Miller-Stevens K.**, *Advancing Collaboration Theory: Models, Typologies and Evidence*, Routledge, New York, 2016, 315 p.
11. **Otenyo E. E., Lind N. S.**, *Comparative Public Administration: The Essential Readings*, Elsevier Ltd, 2006, pp. 463-489.
12. **Richard J. Stillman**, *Public Administration: Concepts and Cases*, Fifth ed., by Houghton Company, USA, 1992, pp. 451-488.
13. **Rumki B.**, *Public Administration: Concepts and Theories*, Fifth ed., New Delhi, 2004, pp. 4-10, 41-45.
14. **Wollmann H., Kopric I., Marcou G.**, *Public and Social Services in Europe: From Public and Municipal to Private Sector Provision*, "Palgrave MacMillan", 2016, 334 p.

Լրացուցիչ գրականություն

1. **Бабосов Е. М.**, Модернизация социальных систем, Минск, 2014, 256 с.
2. **Barraket J., Keast R., Furneaux C.**, Social Procurement and New Public Governance, Routledge, New York, 2016, 169 p.
3. **Carver J., Carver M.**, Adjacent Leadership Roles: CGO and CEO, «Carver Policy Governance Guide», Jossey-Bass publ., San Francisco, 2009, 43 p.

4. **Chandler A. D. Jr.**, The Visible Hand: The Managerial Revolution in American Business, Cambridge, Mass.: Harvard University Press, 1977.

5. **Chistensen T., Laegreid P.**, Transcending New Public Management: The Transformation of Public Sector Reforms, "Ashgate", USA, 2007, 301 p.

6. **Greve C., Laegreid P., Rykkja L. H.**, Nordic Administrative Reforms: Lessons for Public Management, Public Sector Organizations, Palgrave Macmillan, London, 2016, 248 p.

7. **Goldman E. F.**, A History of Modern American Reform, New York, 1952.

8. **Kyong-Dong K.**, Alternative Discourses on Modernization & Development: East Asian Perspectives, Palgrave Macmillan, Singapore, 2017, 288 p.

9. **Kyong-Dong K.**, Korean Modernization & Uneven Development: Alternative Sociological Accounts, Palgrave Macmillan, Singapore, 2017, 302 p.

10. **MacCarthaigh M.**, Public Sector Reform in Ireland: Counting Crisis, Palgr. Macm., UK, 2017.

≈Մեմինար պարապմունքի հարցեր≈

Հանրային և մասնավոր հատվածների կառավարումը հանրային կառավարման ժամանակակից հարացույցի շրջանակներում:

Կառավարման բազմաստիճան մոդելի արդյունավետությունը 21-րդ դարում:

Հանրային-մասնավոր հատվածների փոխգործակցության մշակույթի ու մոդելների համեմատական վերլուծություն:

«Երրորդ հատվածի» ձևավորման և ազդեցության հիմնական մեխանիզմները:

ԹԵՄԱ 4. Քաղաքականություն-կառավարում երկատումը (դիխոտոմիան) հանրային կառավարման ժամանակակից տեսությունում

Քաղաքականություն-կառավարում երկատման (դիխոտոմիայի) շուրջ գիտական բանավեճը: Քաղաքական դպրոցի հիմնադրույթները: Քաղաքականության և կառավարման գործառույթները. Վուդրո Վիլսոն: Քաղաքականության և կառավարման ինստիտուցիոնալ հարաբերությունները. Ֆրենկ Գուդնաու: Կառավարման գործընթացի չափումը. Առաքելություն, քաղաքականություն, վարչարարություն, մենեջմենթ: Քաղաքականության և վարչարարության արժեքները: Վարչական իրավունքը: Քաղաքականություն-կառավարում դիխոտոմիան ըստ Հերբերտ Քաուֆմանի: Քաղաքականության մշակումն ("Policy making") ու իրականացումը ("Policy execution"): Գնահատման փուլերը: Քաղաքականության և վարչարարության տարանջատման խնդիրը հանրային կառավարման ժամանակակից տեսությունում: Քաղաքականության և վարչարարության փոխհարաբերությունների չորս մոդելները: Ընտրովի և նշանակովի պաշտոնների վերլուծություն. Ջեյմս Հ. Սվարա: Ռացիոնալիզմը քաղաքականության մեջ. Մայքլ Օուկշոտ: Տեխնիկական և պրակտիկ գիտելիքների տարբերությունը: Լիբերալիզմի և պահպանողականության հակադրությունը քաղաքականության մեջ: Քաղաքական ռացիոնալիզմ: Կառավարման նպատակային և քաղաքացիական հայեցակարգերը: Քաղաքականությունն ու վերին օղակի բյուրոկրատները: Վարչական ապարատի վերահսկողության մասին տեսությունը (Control-of-bureaucracy theory): Քաղաքական վերահսկողություն: Վարչարարության «ոսկե» սկզբունքները. Հերբերտ Մայմոն:

Գրականություն

1. **Մարգարյան Մ.**, *Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր*, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, «Պետ. ծառայութ.», Եր., 2004, 264 էջ:
2. **Մարգարյան Մ.**, *Քաղաքական իշխանություն*, Ուսումն. ձեռնարկ, «Պետ. ծառայութ.», Եր., 2001, 112 էջ:
3. **Оукшот М.**, *Рационализм в политике*, Идея-Пресс, М., 2002, 288 с.
4. **Bratman E. M.**, *Shared Agency: A Planning Theory of Acting Together*, Oxford University Press, UK and New York, 2014, 232 p.
5. **Cook J. Brian**, *Democracy and Administration: Woodrow Wilson's Ideas and the Challenges of Public Management*, Johns Hopkins University Press, Baltimore, 2007, 271 p.
6. **Richard J. Stillman**, *Public Administration: Concepts and Cases*, Fifth ed., by Houghton Company, USA, 1992, pp. 1-36, 426-451.
7. **Farazmand A.**, *Bureaucracy and Administration*, CRC Press, USA, 2009.
8. **Fischer F., Miller G. J., Sidney M.S.** *Handbook of Public Policy Analysis: Theory, Politics and Methods*, "CRC Press", USA, 2007, 670 p.
